

նինք նաեւ շատ բազմաթիւ քրդախօս, արաբախօս եւ վրախօս հայեր:

Համշէնցիին, մահմետական թէ քրիստոնեայ, ունի ինքնուրոյն հայ բարբառ մը¹: Աճառեան, որ առանձին կերպով ուսումնասիրած է այս բարբառը 1910ին, կը շեշտէ թէ Համշէնի եւ Սեւ-Գետի հայերը՝ «տանեակ հազարաւորներ բռնի մահմետական դարձան եւ մինչեւ այսօր ալ կը համարուին տաճիկ, թէեւ իրենց հին հայկական սովորութիւններն եւ պապինի հայ բարբառը կենդանի կը պահեն»:² Համշէնի անմիջական դրացին՝ լիովին հայ մնացած Խոտորջուր տարբեր հայերէն բարբառ մ' ունի, թէեւ նմանութեան այլեւայլ կէտեր կան:

Պոնտական շղթայիս այս հովիտները հիանալի են բնական գեղեցկութեամբ եւ յաճախ մրգաւէտ. բայց՝ մանաւանդ բարձրադիր անտառախիտ ձորերը՝ մշակութեան հող բաւական չունին: Այսօր բայ ի ծխախոտէ՝ զլիւաւորաբար «լազուտ» (= եգիպտացորեան) է մշակուածը, հազիւ բաւական ժողովրդեան: Համշէնցիին կանխաւ իսկ ստիպուած էր գաղթել: Բայց մանաւանդ հա-

¹ Հմմտ. Հր. Աճառեան, «Հայ բարբառագիտութիւն», Մոսկուա 1911, էջ 184—198: